# ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊՍ. ԳԱԼՈՒՍՏՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 90-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ՝ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Մարտի 9-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Մեծի Պահոց Արտաքսման կիրակի օրը, մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան Հոգեշնորհ Տ. Գնել աբղ. Սողոմոնյանը: Հընթացս սրբազան արարողության հավուր պատշաճի քարոզ խոսեց Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Աղան արքեպս. Պալիոզյանը՝ անդրադառնալով օրվա խորհրդին:

Հավարտ Ս. Պատարագի, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց մասնավոր հոգեհանգիստ՝ Կ. Պոլսի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Շնորհք արքեպս. Գալուստյանի ծննդյան 90-ամյակի առթիվ:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*